ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6 պայմանագրում 2018 թվականի ապրիլի 9-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կապալառուի գրություն և պատասխանատու ստորաբաժանման առաջարկություն:
Փոփոխության նկարագրություն	ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6 պայմանագրի կատարման համար նախատեսված հավելված 1-ի՝ ուժը կորցրած ճանաչվելը և օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների փոփոխություն:
Փոփոխության հիմնավորում	ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6 գնման պայմանագրի 8.4 կետ:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

07.12.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6 գնման պայմանագրի

ք. Երևան 09 ապրիլի 2018 թ.

«ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Տրանսունիվերսալ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Բաղդասարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 07.12.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի.

1.1.1. 5.1.1 կետից հանել <<N 1.1 հավելվածով նախատեսված՝ նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան>> բառերը.

1.1.2 8.10 կետից հանել <<N 1.1>> բառերը.

1.1.3 հավելված N 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելվածի:

1.2 Ուժը կորցրած ճանաչել Պայմանագրի հավելված N 1.1-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն համաձայնագրի հավելվածը՝ բաղկացած 1 (մեկ) էջից, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	**Կապալառու՝**
ՀՀ կառավարությանն առընթեր	<<Տրանսունիվերսալ>> ՓԲԸ
քաղաքաշինության պետական կոմիտե	ք. Երևան, Զավարյան 13/1,
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	Կոնվերսբանկ ՓԲԸ
կառավարական տուն3	հ/հ 1930065126540100
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՎՀՀ 03300028
աշխատակազմի գործառնական վարչություն	
ՀՀ 900011011807,	
ՀՎՀՀ 02565827	

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
ստորագրություն
Կ.Տ.

Տնօրեն՝

_____ Ա. Բաղդասարյան
ստորագրություն
Կ.Տ.

Հավելված
09.04.2018թ. կնքված համաձայնագիր N2-ի
<<Հավելված N 2
07.12.2017 թ. կնքված աշխատանքների կատարման
N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6 գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման շինարարական աշխատանքների իրականացման համար 2017 թ. հատկացված գումարների շրջանակում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

ըստ աշխատանքների ծավալների

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ դրամով)	Աշխատանքների կատարման ժամկետը Ոչ ուշ
1	30.000.000	30.04.2018թ.
2	18.971.596	05.06.2018թ.

ըստ առանձին աշխատանքների տեսակների

N ը/կ	Կատարվելիք աշխատանքների անվանումը	Կատարված աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը
1	Քանդման աշխատանքներ(I փուլ),ուժեղացում	10.04.2018թ.
2	Բացվածքներ,արտաքին պատեր,ներքին միջնապատեր	25.04.2018թ.
3	Էլ. սնուցման մալուխային գիծ.էլեկտրոուժային սարքավորումներ և լուսավորություն (I փուլ)	10.05.2018թ.
4	Միջին և ցածր ճնշման արտաքին գազատար (I փուլ)	05.06.2018թ.
>5	Տանիք(I փուլ),օդափոխություն(I փուլ),ներքին հարդարման աշխատանքներ (I փուլ)	05.06.2018թ.

>>:

Պատվիրատու՝
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011011807,
ՀՎՀՀ 02565827

Կապալառու՝
<<Տրանսունիվերսալ>> ՓԲԸ
ք. Երևան, Զավարյան 13/1,
Կոնվերսբանկ ՓԲԸ
h/h 1930065126540100
ՀՎՀՀ 03300028

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
ստորագրություն
Կ.Տ.

Տնօրեն՝

_____ Ա. Բաղդասարյան
ստորագրություն
Կ.Տ.